

ԱՐԵՎԼՈՅՍ ԱՐԱՐՏԵԱՆ

Հատը 3 մեծալիք իզմիլի մէջ

ԿԸ ՀՐԵՏԱՐԵՎԻՐ ԶՈՐԵՐԵՐԻ ԳԵՐԱՆՈՒՄ

Դուրսերը 4 մեծալիք Հատը

Յ Ե ՍՊԵՏԵՐԱՆ

Համարատու — Տնօրէն

Տ Ա Ր Ե Դ Ի Ն Կ Ա Ն Խ Ի Կ

ԻԶՄԻՐ Օսմ. սահի 1
ԴՈՒՐՄԱՐ Միջին 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ Ֆրանք 25

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ա Դ Ի Ն

5 զրուշտուց ՄԼԿ ԱՆԳԱՍՏ
2 զրուշ ԵՐԿԻՐ ԱՆԳԱՍՏ
80 փարա ԵՐԿԻՐ ԱՆԳԱՍՏ

Չ. Գ. ՊԵՐՍԵՊԵՐՍԵՆ

Հիմնադիր

Ա. Կ. ԱՂԱԶԱՐԵԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերակ բոլոր գործերը: Ծիշէ՛ցի՛ր ճատտէսի Ձինկըրարա Ֆէրիսանէ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, անօրէնի կը դուրսի: Եւ վի խան Թիւ 17

ԻԶՄԻՐ, ԶՈՐԵՐԸ, 7/19 ՄԱՐՏ 1884

ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԵՐ. ՄԵԼԻՔԻՍԵԿԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ԵՒ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՄԻՔԵԼԵԱՆ

... Այդ սիրելի պարոնիկ-
ներն առիթներ ընծայել
կուզեն մեզ խորհրդով հետ
դնելու թէ «Բիշ» մ'աւելի
բարձր երգեր իրերը: Աս-
կայն այն ատեն ցուելով
սիրտ ստիպելին ըսելու ի-
րենք իրենց թէ. ամեն բան
վարդ չէ պարտական գը-
րութիւններ ընելու մէջ:

ՄԱՐՏ

Դաս մը մարդերու համար որ
և իցէ խորհրդ մէջ՝ այնքան բը-
նական եղած է միշտ իրենց կը-
րից և շահու աւելակութեան
համեմատ կարծիք մը յայտնել.
այնքան սովորական դարձած է
ամեն ժամանակ հնարական օգ-
տին մէջ անհատականը որոնել.
Հետաքրքիր թեման բարձրութիւնը
իրենց քանակին հաճոյից գոհել
ազգային ազգային և փոստիկ առ-
ջու՝ միմիայն իրենց ունեցած ա-
թոք և պաշտօնական սիրտը պա-
հելու ջանք ընել. այնքան հա-
սարակ եղած է, մի և նոյն բողո-
մայի, զի և նոյն ամբողջ, միեւ-
նոյն պաշտօնին համար անտար-
բանալ, լսածը անգիտել, գիտ-
ցածը պահել, վերջապէս մէկ
խօսքով ամեն բանին ինչպէս աչք
նայնպէս ականջ ու բերան իւր-
վել, զի երբ մէկը մը և իցէ առ-
թիւ երբ կարծիք մը յայտնէ,
երկու խօսք արտասանէ, երկու
տող բան գրէ, անմիջապէս փո-
խանակ անոր կարծիքը ուղիղ
կամ սխալ քննելու, փոխանակ
անոր գրութիւնները ճշմարիտ
կամ անտարբէր ըլլալ տալու, փո-
խանակ անոր խօսքերը եթէ ի-
րաւ են իր իրողութիւն ընդու-
նելու, իսկ եթէ ուրիշ փաստե-
րով հերքելու, ներքին նպա-
տակ, կուտակական ոգի կ'իքն
սքըռուին, անձնական շահ և նը-
կատում կը յուզեն ու եթէ չը-
գանեն՝ կը հնարեն, կը քաղցեն,
կը յօրինեն, և երբ այս իսկ ան-
բաւական լինի կը զրոյսարտեն, կը
նախատեն և մինչև իսկ կը հայ-
հայեն:

Ճիշդ այս ոգով և զգացու-
մով, ճիշդ այս կերպով և եղա-
նակաւ կը քննադատէ «Արշալոյ-
սի» 1258, 1259 և 1260 թիւե-
րուն մէջ հրատարակուած «Դեր-
Մելքիսեդեկի Մուրատեանի կա-
թողիկոսական արժանաւորու-
թիւնը և այլն» մի գրութիւնս,
«Այսին մէջ հրատարակուած ըզ-
լին թէ ո՞վ շարադրել է, որ
որ Կարապետ Մրքեւեան ստորա-
գրութիւնը կը կրէ:

Կը սիրեմ յուսալ զի Պ. Կա-
րապետ Մրքեւեան պիտի ներէ

ինձ յայտնել որ ինք ոչ միայն
երկու տող բան մը չկրնար գը-
րել, այլ թերեւս իւր ստորա-
գրածն անգամ չ'հասկնար. նը-
պատակս զինքը նախատել չէ,
ըստ որում ազգէտ և անուս մը
նալ թէեւ ցաւալի այլ նախա-
տինք մը չ'կրնար համարուի
երբ ունի իր բանաւոր պատճա-
ռը մանաւանդ թէ իմ խօսածս
նոր և անմասնօք բան մը չէ այլ
գրեթէ բոլոր իշխանաց շատ լաւ
գիտցածն է:

Այսու հանգերէ կը փափաքեի
այս կէտն անգամ լռօրէն անց-
նիլ, որպէսզի Մրքեւեանը չը վի-
րաւորեմ. բայց այն ատեն ան-
հնար պիտի ըլլար ինձ խօսքս
ուղղել նոյն գրութեան բուն հե-
ղինակներուն, և նոյն իսկ Պր.
Մրքեւեանը միշտ իմ հարուած-
ներուն ենթակայ լիմ հարուած-
ուել իմ տարիք պատասխանիս
առթիւ. մինչ նոյն հեղինակներ
որ նորա ետեւ պահուած յու-
շարարի պէս խօսիլ կ'ուսն իրենց
ամեն ուղածք իրաւ և անիրաւ՝
անյայտ մտաւոր, իրենց ճարտա-
րամտութեան յաջող ելքին վրայ
պիտի ուրախանային և լրբօրէն
պիտի քրքրէին:

Եւ ի՞նչ իրաւամբ հարուածել
Պ. Մրքեւեանը քանի որ նորա
վիճակ ու պաշտօն անսրկայ կը
հաստատեն զի անձնական շահէ,
իւր ունեցած պաշտօնին հարկէն,
բարձրագոյն հրամանէ ստիպեալ
ստորագրած է «Այս ոչ այդ կա-
րեւոր յօդուածը: Պ. Մրքեւեան
այս պարագային մէջ շատ ան-
մեղ է, շատ արդար է, ուստի
չունիմ խօսք մը իրեն ուղղելու,
միայն թէ հրապարակել կ'ոյշտ-
նեմ իմ ցաւ զի ինք այդպիսի
անձերու քով պաշտօն կատարե-
լու ստիպուած է, որոնցմէ բա-
րոյցապէս շատ աւելի արժէք ու-
նի. յանցաւորը, անիրաւը այս
անձերն են ահա որ վճարուած
վարձքի մը փոխարէն աշխատա-
ւորեն փոխանակ գործ և աշխա-
տութիւն փնտռելու՝ անոր կամ-
քն ու կարծիքը կը պահանջեն
և միմիայն նոյնի պատիւն ու խիղ-
ճը բռնաբարել տարբեր ոճի-
ր մէջ:

Այս նորահնար ճարտարաբե-
տութեամբ, այս անուր մեքե-
նայութեամբ գրուած յօդուա-
ծին ածականներու կուտակու-
թիւն մը, «այս եւ, «այս եւ, «այս
եւ»-ներու հիւսէն մը, զրպարտա-
թիւններու գէղ մը, և հայհո-
յութիւններու չեղ մ'ըլլալով՝
հարկ չէի զգար բնաւ անոր պա-
տախանել եթէ հրատարակու-
թիւնն շատ առաջ եւ լսած չըլ-
լայի, ուրիշները տեսած չըլլա-
լին թէ ո՞վ շարադրել է, որ
որ Կարապետ Մրքեւեան ստորա-
գրութիւնը կը կրէ:

մասն պարագայներու մէջ՝ սըր-
բազանին վերաբեր զագաթը կը
ցցուի, որովհետեւ ազգային քա-
ղաքականութեան և դաւերու
մէջ ճանաչողութիւն բնաւ թէ
ին խորթանքը և արիւտան մե-
ղաւք կը տատանի, որովհետեւ
անիմաստ անպատեհութիւն շար-
քորթիլ «Եւ»-ներու և անպատեհ-
հայհոյութիւններու մէջ իզմիլի
տրիբունին ցրտութիւնն և պա-
ղութիւնը կը զգացուի, որովհե-
տեւ այդ գրութեամբ համադու-
մարին մէջ պարզութեւն բազմա-
Պատիւար քարանի առջեւ անբա-
սիր ներկայացելու, իսկ Պրքեւե-
անց պաշտօնը քով համակրելի երե-
ւելու տեսլ փափաք կ'ընդունա-
րուի, աւելորդ չեմ համարել
նոյն քննադատութեան մէջ մի
մասուն հերքել անկողմնակալ
ուղով թէեւ այս առթիւ պիտի
ստիպուիմ յայտնել ինչ որ իմ
առջի գրութեան մէջ շատ հա-
մարեք էի. և գիտեմ զի այսու
Դեր. Մելքիսեդեկի պաշտօնա-
ներ աւելի մեծ դարձան, պիտի
զգաս, բայց ինչպէս այդ զոյ-
րով նոյնպէս և ուրիշ միջոցներ
ինձ արգելք մը չեն կրնար լինիլ
իրողութիւնները ճշգրիտ կերպով
պարզելու. այս առթիւ ես շատ
անմեղ կրնամ նկատուիլ և յան-
ցանք անոնց կը վերաբերի որոնք
անգիտեալ կը լինին թէ քանի
խառնակ այդ կրակը՝ այնքան
կայծեր պիտի ցայտեն իրենց
աչքին մէջ:

Արդ՝ «Այսին» ինչեւ նամակին
մէջ ինձ պատասխան տրուելէ ա-
ռաջ, իզմիլի մէջ Դ. Մելքիսեդե-
կին անանհար եղած խմբակ մը
ցոյց կը տեսնուի որ ակնդէտ վրէժի
ժամու կը ստանէ և այդ ժամ իւր
թէ հասած կը կարծէ եղեր երբ
իսկեքճեան էֆէնտի մահուան
անկողնոյն վրայ կ'աղմուկաւորու-
նալու իրենց անհոգի և զրոյս-
բազմութիւնը, երբ ազգին մէջ
ամեն կողմէ համակրելի ձայներ
կըլլուն (Դըլլարէն թէ էֆէնտի-
չէն) Դեր. Մելքիսեդեկի կաթո-
ղիկոսական դասը բարձրացնելու
համար, երբ վարձատրուեան և
Մուրատեան քիչ մը վեր քիչ մը
վար (վեր նայեցէ՛ք Մելքիսե-
դեկեաններ) կը համեմատուին և
ուստի այդ խմբակն անուր սու-
տեք հրապարակ կը հանէ որպէս
զի Դեր. Մելքիսեդեկի կաթողի-
կոս չ'ընտրուի և վշտանալով նոյ-
նի յարձակութիւններ հրաժարի
առաջնորդութիւնն որպէսզի ի-
րենք վերականգնուին իրենց
ազգակործան գերքը, այս է ինչ-
պէս երբեմն խառնաշփոթ եղեւ
եանի հետ միացած եկեղեցին
կողբալով և ազգային անուր
դրամով իրենց քաղաք ունեցնել,
և ահա ես ևս այդ խմբակին իւր
գործիք մատնանիլ կը լինիմ:

Եթէ մահուան անկողնը օր-
հասական մը յայտնած կարծի-

քը անտիպութեամբ նուիրողոր-
մուէր. եթէ հոգնաժամ մէջ ար-
տասնաւոր խօսքեր իւր անկրի-
պի ընդունուէին՝ ամեն հո-
գեկար Դերիսեան պատգամներ
պէտք էին համարուիլ. սակայն
գործողարար այսպէս չէ, դեժ-
բազդարար կ'ընեմ նոյն իսկ
մարդկային ազգի համար, մարդ-
կային ազգի որ եթէ այսպիսի
անտիպ պատգամներ ունենար՝
շատ կ'ընտա ինքիւնը առանց
կուտի և վիճարանութեան լու-
ծում կ'առնանային. վիճարանու-
թիւն, ինչ ահա ինչ բաւ այն ան-
ձերուն համար որոնք միմիայն
հաւատք՝ զօնել սովորած են: Այս
պարագայն չգիտեմ ինչպէս ան-
գիտեալ կը լինին այն մի քանի
Մելքիսեդեկեանները որոնք ի-
րենց գրութիւններու մէջ իփէկ-
ճեան էֆէնտի յիշեալ կարծի-
քեր իւր բնաւան կ'ընտան միշտ,
մանաւանդ թէ դարմանալին այն
է զի երբ բարեկիցատակ դաս-
տիարակը իզմիլ կը գտնուէր՝ Դ-
մա՛հ կը լսէին, և այժմ՝ Ե-
մա՛հ կը լսեն:

որ՝ որիցէ պաշտօնեայ հակա-
ուսողներ չ'ունենայ. միայն թէ
հակաուսողներ պաշտօնեայի
մը արժանիք չ'են կրնար նաե-
ւանցնել երբ ինք ուղիղ է և
պարտաճանաչ, ինչ որ ալ ըլլայ
ընդունելի խմբակ մը գոյու-
թիւնը Դեր. Մելքիսեդեկի դէմ
որ վրիժառութեան յարմար ա-
ռիթ մը կը ստանէ, այս լաւ է և
շատ լաւ. միայն թէ ես չեմ
կրնար բժշկել թէ վրիժառու-
թեան ինչ առիթ կրնայ ընծա-
լել իրենց հետեւ և ուրիշներու
ձայնք քանի որ անոնք Մելքի-
սեդեկի որբազանին նպատաւոր
են. և իրաւ ամեն մարդու յա-
ջողութեան փառաց բարձրու-
թեան միջոցին իւր թշնամիներ
ամբողջ կը մնան, իրենց լե-
զուն կը քաշեն և ակնիւր կընա-
լին մինչ վրէժ լուծելու ամենէն
յարմար միջոցը վրիժաման, սխա-
լման և անկման ժամանակն է.
եթէ այս կերպով ըսել կ'ուզուի
զի իրենց հետեւ էֆէնտի չափա-
զանց գովաբանելով Դեր. Մել-
քիսեդեկի սխալեցաւ և այդ իսկ
տեղի տուաւ հակաուսողի լրբ-
բալին իրողութեւն այն ատեն խօսք
չունիմ, ըստ որում ինձ համարիս
կը գտնուին, ուստի և հարկ չ'իմար
այս երկար վիճարանութիւննե-
րուն:

Ասկէ շատ աւելի մեծ սխալմը
շատ աւելի ամբիւայի սուտ մը կը-
նայանք՝ այն կողմաւոր և գործը
որ ցոյց կը տրուին երեսնանի
միացած ինչպէս անոնց ինչ եւն
ներկայ թագուն նպատակներն:
Նախ՝ հարկ կը համարեմ զի-
տեւ զի երեսնանի օրով Ազգային
Բաղ. Ժողովոյ անդամներն էին
Մեծ. Եղազապ Տայիեան, Թով-
հանէս Ոսկանեան, Դերբէ-
է-

մասնան, Խաչատուր Թ. Էֆէնտի-
ները որոնք նոյն միջոցին միան-
աւանդ Տիտեսական խորհրդոյ
պաշտօնին կ'ընտարէին՝ Սահմա-
նադրութիւն տակաւին անթերի
գործողութեամբ չըլլալով. մէկը
թողլով որ այդ անձեր նիւթա-
պէս բարեւալ վիճակ մը ունենա-
լով՝ այդպիսի ապօրէն միջոցնե-
րու պէտք չունէին դիմել, մէկ
զի թողլով որ այդպիսի ամբա-
տանութիւն մը ժամանակին չէ
լուծած երբեք, այս կէտեր մէկը
թողլով եւ ձեռքը հարցնեմ Մել-
քիսեդեկեաններ, թէ երբ նոյն
վարչութեան ժամանակին բուն
հակաուսողներն իսկ որոնք կը
յիշէք և աշխարհ գիտէ թէ ինչ
ատելութիւն և ոյս կը տաճէին
նոյնին դէմ, երբ այդ հակաուսա-
կողներն իսկ այդպիսի ամբա-
տանութիւն մը չ'են բրած, դուք
ինչպէս կը յանդգնիք ընդհանա-
մանաբար. Բայց գիտեմ, դուք
այսու ձեռք պաշտպանած որբա-
զանին այնպիսի կարևոր գործու-
նեւութիւն մը կուզէք տալ որով
իւր պաշտօնին ստանձմամբ ըն-
լած է սոս օրինակ զընդունելը:

պաշտօնակիցներ վերականգնու հա-
մար Դեր. Մելքիսեդեկի առաջ-
նորդութեան հրաժարեցին կը-
ճեցին. այդ պաշտօնակիցներն
առաջ երեքը մեռեալ են. չոր-
րորդը Պուռնոյայէն իզմիլ իջած
չունի, իսկ հինգերորդը Պրքեւ-
մանան Պոստի Էֆ. է միջին ազգի
ստակով իւր քաղաք ունեցողը
և ունեցնելու պատեհ ժամ
փնտաղը, Պոստի էֆէնտին որ
հաւատարմութեան և ուղղու-
թեան կենդանի տկար մ'է.
կենդանի տկար մը կը ստանձ-
նալ իրենց հետեւներ, լաւ ու զր-
այս խօսքին ըստ որում իրական
է և ոչ չորդարթական ձեռք սը-
բազանին յատկացուած ածա-
կաններուն պէս:

Դուրսերուն վերականգնութե-
ամար Դեր. Մելքիսեդեկի կա-
թողիկոս ըլլալու արգելք բնաւ
չ'են համաձայնիք իրարու, քանի
որ Դեր. Մելքիսեդեկին է ազգ-
անուրկին անթիւ պահապանը.
պէտք է այդ պահապան մեկին
որպէսզի յախառնութիւններ
սկսուին, սակայն քանի որ կ'պըն-
դէք թէ խմբակ կ'արգելէ
կաթողիկոս ըլլալ կամ այն է որ
գողութեան երկուցներ բոլոր-
վին անտեղի են և կամայն է որ
Դեր. Մելքիսեդեկի կաթողիկո-
սութեան հակաուսալ խօսքներն
այդ խմբակին չ'են վերաբերել:

Շարունակէ՛

ՀՈՐՈՅ

Մեծարող Խմբագիր

Ժամանակէ մը իվեր Լոյի թեր-
թիւն մէջ Խմբագիր Խմբագիր
զրով պարտաւարի մը հրատա-
րակութիւնը կը շարունակուի, որ
իրաւամբ «Հայ Եղազի հայհոյա-
նայ բառարան» տիպոգրֆին ար-
ժանապատէ, այս գրուածներն
մէկ նպատակ ունին միայն, այն
է նորանոր հայհոյութիւնը ըս-
տեղծելով՝ Դեր. Մելքիսեդեկի

